ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք՝ ք. Բյուրեղավան Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

12 դեկտեմբերի 2018 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:

Բացակա էին Արտյոմ Ավագյանը, Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը և Վարդան Սուքիասյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, Զրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Հայրապետյանը և համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Ի պատասխան Հ. Բալասյանի հարցին՝ արդյոք ավագանիները տեղեկացված են եղել օրակարգի հարցերի մասին, աշխատակազմի քարտուղարը պատասխանեց, որ որոշումների նախագծերը հավելվածներով էլեկտրոնային փոստով ուղարկվել են ավագանիներին, տեղադրվել են համայնքապետարանի պաշտոնական կայքի ավագանու նիստեր բաժնում, ինչպես նաև նիստի մասին հայտարարությունը տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12 –Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին,

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2019 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին,

3)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2019 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին,

4)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2019 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին,

5)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27–Ի N 24-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 59-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2019 թվականի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 1-ի:

2.Սահմանել տեղական տուրքերի դրույքաչափերի տարբեր գործակիցներ համայնքի տարբեր բնակավայրերում՝ համաձայն հավելված N 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 60-Ն/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Բյուրեղավան համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական վճարների 2019 թվականի տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները՝

1)համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) դրամ.

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 20000 (քսան հազար) դրամ.

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 (տասը հազար) դրամ.

4)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ.

5)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

6)համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 (երկու հազար դրամ).

7)համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման գումարի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար՝ 10 (տասը) դրամ.

8)Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ և արտոնություններ՝ համաձայն հավելված N 1-ի.

9)«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափ և արտոնություններ՝ համաձայն հավելված N 2-ի:

10)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1000 (հազար) դրամ.

11)համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ յուրաքանչյուր կանխարգելիչ միջոցառման համար՝ 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 61-Ն/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 19–րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2019 թվականի դրույքաչափերը՝

1)հասցեների տրամադրման համար՝ 5000 (հինգ հազար) դրամ.

2)համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար՝ 26 000 (քսանվեց հազար) դրամ.

3)համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման համար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար.

4)համայնքի ավտոկանգառից երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների օգտվելու համար՝ ամսական 1000 (հազար) դրամ՝ յուրաքաչյուր մեքենայի համար.

5)ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար տրամադրվող վճարովի հողատարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ 10000 (տասը հազար) դրամ.

6)համայնքի գերեզմանատան պահպանման և սպասարկման ծառայության վճարը սահմանել 10000 (տասը հազար) դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 62-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 20-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասի՛ն» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ հոդվածի 7-րդ մասերի և 14-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1.Սահմանել Բյուրեղավան համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար 2019 թվականի աղբահանության վճարի դրույքաչափերը՝

1) բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 (երկու հարյուր) դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) դրամ,

2) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

ա. առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ.

բ. հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 (երեք) դրամ.

ե. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով,

3) ոչ կենցաղային աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10000 (տասը հազար) դրամ:

2.Աղբի հավաքման և փոխադրման թույլտվությունները տրամադրել կոնկրետ աղբահանության վճար վճարողների քանակի համար՝ վճարովի հիմունքներով: Թույլտվությունների համար վճարների դրույքաչափերը սահմանել համապատասխան աղբահանության վճար վճարողի կողմից սույն որոշման 1-ին կետով սահմանված դրույքաչափերի 20 տոկոսի չափով:

3.Համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարից 2019 թվականին արտոնություններ սահմանել հետևյալ սոցիալական խմբերի համար՝ սահմանված դրույքաչափերի 50%-ի չափով՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին.

2) բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 63-Ն/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 24-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշմամբ հաստատված հավելվածի 1, 2, 3 և 6 հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 64-Ն/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Նիստի ավարտից հետո աշխատակազմի քարտուղար Լ. Ավուշյանը ավագանու անդամներին ներկայացրեց Բյուրեղավան քաղաքի բնակիչ Մարիետտա Պողոսյանի՝ ավագանիներին հասցեագրված դիմումները: Վերջիններս որոշեցին անձամբ հանդիպել նրա հետ և լսել նրան:

Ավագանու անդամներ՝

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ _____

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ _____

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ _____

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ _____

ՀԱՅԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ_____Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝_____Լ. ԱՎՈՒՇՅԱՆ